

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

2015\_2018 թ.

ՎԱՆԱԶՈՐ  
2015

# ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վանաձորի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի առաքելությունն է. լինելով ՀՀ հյուսիսային տարածաշրջանի առաջատար բուհի ֆակուլտետներից մեկը՝ ապահովել քաղաքացիների անընդհատ կրթության իրավունքի իրականացմանը, պատրաստել մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ոլորտի բարձրորակ մասնագետներ և ուսուցիչներ:

## ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի տեսլականն է. ձգտել 2018 թ. դառնալու ՀՀ կրթության բնագավառում միջազգային չափանիշներին բավարարող բարձրորակ մասնագետներ պատրաստող, գիտական հետազոտություններ իրականացնող ֆակուլտետ:

Այդ նպատակով ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը իրականացնում է.

### 1. Կրթական գործունեություն

- Կրթական նոր ծրագրերի մշակում և իրականացում, որոնք ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի շրջանավարտների հնարավորություն կտան լինելու մրցունակ պրակտիկ մասնագետներ:
- Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ուսանողների ինտեգրումը եվրոպական կրթական տարածք, որպես Բոլոնիայի Հռչակագրի սկզբունքների իրականացման պայման, ապահովելով նրանց ակադեմիական շարժունությունը:
- Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի շրջանավարտների մասնագիտական հմտությունների ձևավորում՝ աշխատաշուկային համապատասխան:

## **2.Գիտահետազոտական գործունեություն**

- Ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների խրախուսման քաղաքականության մշակում և մասնագիտական աճին նպաստող որակավորման դասընթացների կազմակերպում:
- Ֆակուլտետի ուսանողների մասնակցության ապահովում համալսարանի ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին:

## **3.Սոցիալ-դաստիարակչական գործունեություն**

- Ուսանողների գործնեության այնպիսի կազմակերպում, որն ուղղված լինի անձի կատարելագործմանը, դաստիարակվածությանը, բարոյական և գեղագիտական դաստիարակությանը, ինչպես նաև ֆիզիկական զարգացմանը և առողջության պահպանմանը:
- Պետականության գաղափարի, հայրենասիրության, մարդասիրության դաստիարակում:

## **4.Որակի ապահովում**

- Վերահսկում ֆակուլտետում կրթական ծրագրերի պլանավորման, մշակման և դրանց որակի ապահովման գործընթացներին:
- Պատասխանատվություն ֆակուլտետում ուսման որակի ապահովմանը և ներքին վերահսկմանը: